րութենէ ճշդիւ թարգմանեալ եդաք 'ի կարգի պատմութեանս։ Սակայն Վիրք՝ թէպէտեւ ամբաստանութեամբ յարուցին վէճս և քննութիւնս, այլ ոչ ինչ կարացին շահիլ. զի ոչ կարացին մերժել զԼատինս 'ի տեղւոջէն յայնմանէ, զոր ժառանգեն մինչեւ ցայսօր ժամանակի. նոյնպէս և ոչ 'ի վանաց Ս. Յակոբայ զՀայս։

Պատմէ Մարինոս Լատին թէ՝ վերելից սանդուխքն Գողգոթայի՝ էր յարեւմտից դէպ յարեւելս, և 8 աստիճանօք ելանէր մինչ 'ի միջին տեղին, և անտի դառնայր դէպ 'ի հարաւ, և 10 աստիճանօք ելանէր 'ի յատակ եկեղեցւոյն, բաժանեալ յերկուս 'ի մէջ Լատինաց և Յունաց. իսկ ամբողջ յատակ եկեղեցւոյն յօրինեալ էր գոյնզգոյն մանր մուզայիւք, որոյ զնմանն չէր ուրեք տեսանել. և 'ի շըրջապատ յորմս զանազան խորհրդաւոր պատկերք նկարեալ 'ի Յունաց և 'ի Վրացւոց, յորոց միջի երեւելի էին պատկերքն Հեղինէ թագուհւոյն եւ Հերակլի կայսեր։ Այժմ այլայլեալ են ամենեքեան, և փոխեալ 'ի ձեւ եկեղեցւոյն Յունաց. միայն 'ի Տարածման տեղին 'ի բաժնին Լատինաց երեւին մնացորդք մուզայից, եւ այլքն նորոգեալք զկնի հրդեհի տաճարին։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Սուլթան Սելիմ Օսմանցւոց։ Առուն Ասորեաց, Պաղեստինայ, և Եգիպտոսի, բարձուն իշխանութեան Մեմլուքաց։ Հրամարակնորին առ Սարգիս Պատրիարք։ Բանտարկութիւն Լատին կրօնաւորաց։ Յովհաննէս եպիսկոպոս։ Աստուածատուր Պատրիարք։

ՍՈՒԼԹԱՆ Սելիմ առաջին, Եաւոզ կոչեցեալ. հզօր թագաւոր Օսմանեան Պետութեան։ Սա հանապազ երկնէր 'ի մտի և քանիցս ծանուցեալ էր նախարարաց իւրոց՝ մաքրել զարեւելս յաղանդոյ Պարսից, և պատրաստէր միւսանգամ արշաւել 'ի վերայ նոցա. բայց իբրեւ լուաւ թէ՝ Սուլթանն Եգիպտոսի Ղուրի կամ Ղաւրի 'ի Զէրքէզ ցեղէ, դաշնակցեալ է ընդ Շահին հակառակ իւր. դարձոյց ըզ-